ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (374010) 287401, (3740281) 2 25 22**

„03„ „11„ 2018թ N 01/11.1/8150-18 **Ֆաքս (374010) 28 18 32**

ՋԵՐՄՈՒԿԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ

Հարգելի Նարեկ Միրզոյան

Համաձայն Ձեր՝ 31.10.2018 թվականի № 12D4-467E-9EAD հարցման՝ ներկայացնում ենք ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Առդիր՝ 3 էջ:

Invalid signature

X

VERIFIED OCSP 11/6/2018 15:56:45 GMT+4

Հարգանքով՝ Signed by: SARGSYAN TRDAT 2901890687 **Տ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող Ա. Կոստանյան

Հեռ. 0281-2-44-38

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի՝ 2018 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ծրագրերի և վերլուծության բաժինը ՀՀ կառավարության **01.10.2017** թվականի **№ 1233-ն** որոշմամբ, այնուհետև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի՝ **26.12.2017 թվականի №1022-Ա** որոշմամբ, վերանվանվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին:

Բաժինն ի պաշտոնե զբաղվել է զբոսաշրջության հարցերով 2018 թվականի հունվարից, ուստի, ելնելով վերոնշյալից, կարող ենք այդ ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրել 2018 թվականի առաջին 10 ամիսների կտրվածքով:

Ստորև ներկայացնում ենք բաժնի կողմից կատարված աշխատանքները նկարագիրը:

Տուրիզմի տարածաշրջանային կենտրոնի հետ մշակվել է հյուրատների զարգացման ծրագիր, որի մրցույթը հայտարարվել է և 25 հյուրատների ներդրումային ծրագրերը կֆինանսավորվեն նոյեմբեր ամսին:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր և ներկայացվել ՀՀ կառավարություն, ինչպիսիք են՝ Նորավանքի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը:

Այժմ Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվում են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը:

<<20 անիրանականանալի իրականություն>> ծրագրում ներառված է Վայոց ձորից պատմամշակության և տեսարժան վայրերի 6 օբյեկտ: Տվյալ ծրագրի շրջանակներում բաժնի և Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ

մշակվել են ենթակառուցվածքների ստեղծման, տուրիստական փաթեթների պատրաստման նախագծերը:

Թուֆենկյան հիմնադրամի կողմից Արենի գյուղում հյուրանոցային համալիրի կառուցման գործում բաժինն աջակցել է պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանը:

Փետրվար ամսին բաժինը կազմել է զբոսաշրջության զարգացման 9 գործարար ծրագիր և ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, որից 2-ն արդեն ֆինանսավորվել է:

Բաժնի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Ուրմիա նահանգ),ՌԴ (Նիժնի-Նովգորոդի Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետություն (Մինսկի մարզ):

Համաձայնագիր է կնքվել ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ և Չեխիայի Հանրապետության Կարլովի Վարի քաղաքների միջև, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի և ՌԴ Բակաու նահանգի Թրգու Օկնա քաղաքի միջև, ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի և Ֆրանսիայի Հանրապետության Պրովան-Ալպ-Կոդ դ՝ Ազյուր շրջանի Վար դեպարտամենտի Բանդոլ քաղաքի միջև:

Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ քննարկվել է զբոսաշրջության ոլորտում համագործակցության հարցը, որի արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ՌԴ Արխանգելսկի մարզի հետ՝ տուրիստական կենտրոններ հիմնել ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերում, որն էլ մարզում կխթանի զբոսաշրջությունը:

Սույն թվականի հոկտեմբերի 7-12-ը Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում Երևանի <<Ազատության>> հրապարակում բացված <<Հայաստան>> տաղավարի կազմակերպչական աշխատանքներն իրականացրել է Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժինը:

Բացի հիմնական տաղավարից՝ մարզին հատկացված էր նաև խաչքարերի ցուցադրման համար նախատեսված տաղավար, որտեղ իրենց աշխատանքներն էին ներկայացնում տաղանդաշատ եղբայրներ Ռուբեն և Կարեն Ղազարյանները՝ զբոսաշրջիկներին և տեղաբնակներին հիացնելով իրենց ստեղծած խաչքարերի եզակի նմուշներով: Նշենք. որ մեր մարզի տաղավարները պատշաճ ներկայացնում էին Վայոց ձորի մշակույթը՝ այդպիսով նաև մարզում խթանելով զբոսաշրջության զարգացմանը:

2019 թվականի զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրերը քննարկման փուլում են, որի արդյունքները կամփոփվեն համայնքների կողմից ներկայացվող տարեկան աշխատանքային պլաններում, ինչպես նաև 2019 թվականին մարզպետարանի ՏԱՊ-ում ընդգրկված ծրագրերում:

2019 թվականին զբոսաշրջության ոլորտի ծրագրերը կարող ենք տրամադրել հունվար ամսին՝ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումից հետո:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին

Հեռ. 0281-2-44-38

3.11.2018թ.